ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

18 հոկտեմբերի 2016 թվականի **թիվ 95** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 117 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 1 հավելված) 24-րդ կետի 1-ին ենթակետին, «Մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 19 հավելված) 11-րդ կետին եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 1 հավելվածի 66-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց.**

1. «Մենաշնորհային բարձր եւ մենաշնորհային ցածր գները սահմանելու մեթոդիկայի մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 117 որոշման մեջ փոփոխություններ կատարել՝ հավելվածի համաձայն:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	Բելառուսի Հանրապետությունից՝	Ղազախստանի Հանրապետությունից՝	Ղրղզստանի Հանրապետությունից՝	Ռուսաստանի Դաշնությունից՝
Վ. Գաբրիելյան	Վ. Մատյուշեւսկի	Ա. Մամին	Օ. Պանկրատով	Ի. Շուվալով

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
խորհրդի 2016 թվականի հոկտեմբերի 18-ի
թիվ 95 որոշման

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի
2012 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 117 որոշման մեջ կատարվող**

1. Անվանման մեջ եւ 1-ին կետում «եւ մենաշնորհային ցածր» բառերը փոխարինել «(ցածր)» բառով։

2. Նշված Որոշմամբ հաստատված՝ Մենաշնորհային բարձր եւ մենաշնորհային ցածր գները սահմանելու մեթոդիկայի մեջ՝

ա) անվանման մեջ «եւ մենաշնորհային ցածր» բառերը փոխարինել «(ցածր)» բառով.

բ) տեքստում «Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի» բառերը փոխարինել «Միության» բառով.

գ) 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Սույն մեթոդիկան մշակվել է «Մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 19 հավելված) (այսուհետ՝ Արձանագրություն) 11-րդ կետին համապատասխան եւ կիրառվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից, իր իրավասությանը համապատասխան՝ Եվրասիական տնտեսական միության երկու եւ ավելի անդամ պետությունների տարածքների անդրսահմանային շուկաներում (այսուհետ

համապատասխանաբար՝ Միություն, անդրսահմանային շուկաներ)՝ այդ շուկաներում գերիշխող դիրք զբաղեցնող տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) կողմից մրցակցության ընդհանուր կանոնների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելիս։».

դ) 2-րդ կետում՝

առաջին պարբերությունում «Համաձայնագրի 2-րդ հոդվածով» բառերը փոխարինել «Արձանագրության 2-րդ կետում» բառերով.

երրորդ պարբերությունում «Համաձայնագրի 29-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետին» բառերը փոխարինել «Արձանագրության 11-րդ կետին» բառերով.

ե) 3-րդ կետի «ա» եւ «բ» ենթակետերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ա) եթե այդ գինը գերազանցում է այդ ապրանքի արտադրության եւ իրացման համար անհրաժեշտ ծախսերի եւ շահույթի գումարը.

բ) եթե այդ գինը գերազանցում է այնպիսի ապրանքային շուկայում մրցակցության պայմաններում ձեւավորված գինը, որը, ըստ ապրանքի գնորդների կամ վաճառողների կազմի, համադրելի է ապրանքի շրջանառության պայմաններին, ապրանքային շուկայի հասանելիության պայմաններին, պետական կարգավորմանը, այդ թվում՝ հարկմանը ու մաքսասակագնային կարգավորմանը (այսուհետ՝ համադրելի ապրանքային շուկա)՝ Միության տարածքում կամ դրա սահմաններից դուրս այդպիսի շուկայի առկայության դեպքում։».

զ) 4-րդ կետում՝

«Չի համարվում» բառերը փոխարինել «Չի կարող համարվել» բառերով.

«ապրանքի» բառից առաջ ավելացնել «այդ» բառը.

է) 5-րդ կետի «ա» եւ «բ» ենթակետերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ա) եթե այդ գինը ցածր է փաստացի կամ այդ ապրանքի արտադրության եւ իրացման համար անհրաժեշտ ծախսերի եւ շահույթի գումարից.

բ) եթե այդ գինը ցածր է այն գնից, որը ձեւավորվել է համադրելի ապրանքային շուկայում մրցակցության պայմաններում՝ Միության տարածքում կամ դրա սահմաններից դուրս այդպիսի շուկայի առկայության դեպքում։».

ը) 6-րդ կետում «Չի համարվում» բառերը փոխարինել «Չի կարող համարվել» բառերով.

թ) առաջին պարբերությունում եւ 13-րդ կետի «ա» ենթակետում «մրցակցության միասնական կանոնների» բառերը փոխարինել «անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների» բառերով։